Հաստատված է
«Հայկական կրթական ցանց»
ՔՀԿ կոալիցիայի
Համակարգող խորհրդի
նիստի որոշմամբ առ 17.06.2019

Համակարգող խորհրդի նախագահ՝
Արտաշես Տոռոզյան

Հայկական կրթական ցանցի հաղորդակցման մեխանիզմ

Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայկական կրթական ցանցի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպությունը և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Մշակվել է՝ մայիս 2019 թ.

Նպատակը

Կանոնակարգել Հայկական կրթական ցանցի (այսուհետև՝ ՀԿՑ) և համագործակիցների, համախոհների, շահառուների, աջակիցների, կառավարության, ՏԻՄ-երի, դոնորների, ՁԼՄ-ների միջեւ արտաքին և ներքին հաղորդակցությունը:

Ակնկալվող արդյունքներ

Հայկական կրթական ցանցը կունենա և կգործարկի համագործակիցների, համախոհների, շահառուների, աջակիցների, կառավարության, ՏԻՄ-երի, դոնորների հետ արդյունավետ հաղորդակցվելու մեխանիզմ:

1. Հաղորդակցումը համագործակիցների հետ

Ովքեր են ՀԿՑ -ի համագործակիցները.

Այն իրավաբանական կազմակերպությունները եւ անհատները, որոնց հետ ՀԿՑ-ն տվյալ ժամանակահատվածում երկկողմանի համաձայնությամբ սահմանված իրավունքներով եւ պարտականություններով գործունեություն է իրականացնում:

Հայկական կրթական ցանցի համագործակիցների ցանկը՝

1. Իրավաբանների Հայկական Ասոցիացիա
2. «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամ /ԳԶՀ,
3. «Սիսիանի Մեծահասակների Կրթության Կենտրոն» հիմնադրամ /ՍՄԿԿ,
4. «Ցկյանս ուսումնառության հայաստանյան լիգա» իրավաբանական անձանց միություն/ՑՈՒՀԼ,
5. Սեյվ Դը Չիլդրն Հայաստանյան ներկայացուցչություն,
6. «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ,
7. «Առաջընթաց» երիտասարդական ՀԿ,
8. Հասարակության Զարգացմանն Աջակցող Կանանց Ասոցիացիա>> հասարակական կազմակերպություն,
9. Կապանի ուսուցիչներ ՀԿ,
10. «Անուշավան Աբրահմյան» հիմնադրամ,
11. «Երիտասարդական գաղափարներ» երիտասարդական ՀԿ,
12. «Ագապե Վորլդ» երիտասարդական ՀԿ,
13. «Երիտասարդությունը հանուն փոփոխության» Երիտասարդական ՀԿ,
14. Գորիսի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ,
15. «Կանանց զարգացման ռեսուրս կենտրոն» Հիմնադրամ,
16. «Կոմպաս» գիտահետազոտական կենտրոն ՀԿ,
17. «Միասին հանուն տնտեսական զարգացման» ՀԿ,
18. «Եղեգնաձորի կանանց ռեսուրս կենտրոն» հիմանդրամ,
19. ՀԿ Կենտրոն,
20. «Երիտասարդները հանուն զարգացման» հիմնադրամ,
21. «Երիիտասարդ Տավուշ» ՀԿ,

Գործողություններ

1. Յուրաքանչյուր եռամսյակ կազմակերպել օնլայն հանդիպում՝ մասնակցությամբ ցանցի անդամների, աշխատակազմի այն անդամների, որոնք այդ ընթացքում համագործակցության շրջանակում որեւէ գործողություն են իրականացրել ու ներկայացնել իրենց կատարած աշխատանքը:

2. Յուրաքանչյուր եռամսյակի վերջին էլ. փոստով կազմակերպել ցանցի անդամ կազմակերպությունների հաշվետվությունների փոխանակում:

3. Կազմակերպել հանդիպում-քննարկում՝ ներկայացնելով ցանցի գործունեության ընթացքը, խնդիրները եւ ձեռքբերումները, գտնել համապատասխան լուծումներ:

4. Համագործակցության վերջին ամսում կազմակերպել կոնֆերանս՝ ամփոփելով գործընթացը եւ քննարկելով շարունակականության ապահովման հետ կապված խնդիրները:

5. Վերոնշյալ յուրաքանչյուր գործողություն արձանագրել եւ ուղարկել համագործակիցներին:

6. Հայկական կրթական ցանցի քարտուղարության կողմից կազմակերպել թղթավարություն և ցանցի յուրաքանչյուր անդամ կազմակերությանը հասանելի տեղում պահել արձանագրությունները առնվազը 3 տարի, այնուհետեւ արխիվացնել:

2. Հաղորդակցումը համախոհների հետ

Ովքեր են Հայկական կրթական ցանցի համախոհները

- Այն մարդիկ են, խմբերը, հաստատությունները կամ երեւույթները, իրողությունները եւ իրադարձությունները, որոնք՝
1. հետաքրքրված են ՀԿՑ-ի իրականացրած գործունեությամբ,
2. զգալի ազդեցություն ունեն եւ կարեւոր դեր ունեն ՀԿՑ-ի կյանքում,
3. անմիջական դրական կամ բացասական ազդեցություն են կրում:

ՀԿՑ –ի ՀԱՄԱԽՈՀՆԵՐԻ ՑԱՆԿԸ՝

2019 թ . դրությամբ
/Տե՛ս ՀԿՑ-ի համախոհների ուժային քարտեզը/

Գործողություններ

1. Կազմել համախոհների տվյալների ընդլայնված բազան, որում հիմնականում պետք է ներառվի հետեւյալ տեղեկատվությունը՝
   - ✓ Անուն,
   - ✓ Կարգավիճակ,
   - ✓ Իրականացրած գործունեության տեսակը,
   - ✓ Կոնտակտ տվյալներ,
   - ✓ Հոբելյանական ամսաթվերը,
   - ✓ Առնչվող ազդեցիկ մարդկանց կոնտակտ տվյալները եւ նեղ անձնական տեղեկատվություն, իրականացրած ծրագրերի ցանկը,
   - ✓ Համագործակիցների ցանկը…

2. Յուրաքանչյուր համախոհի հետ հաղորդակցվելու համար կազմել ժամանակացույց:

3. Այդ ժամանակացույցերից հանել հիմնականում համապատասխանող օրերը եւ կազմել 1 ընդհանուր ժամանակացույց:

4. Առաջնորդվելով այդ ընդհանուր ժամանակացույցով կազմել տարբեր կարգի /ըստ երեւույթի տեսակի/ միջոցառումների /կլոր-սեղան, կոնֆերանս, հանդիպում, սուրճի կամ ընթրիքների կազմակերպում…/

5. Առաջնորդվելով «Տոների եւ հիշարժան օրերի մասին» ՀՀ օրենքով շնորհավորական կամ այլ կարգի էլեկտրոնային եւ տպագիր բացիկներ ուղարկել:

6. Յուրաքանչյուր ամսվա վերջին էլ փոստ ցանկով Հայկական կրթական ցանցում տեղի ունեցած իրադարձությունների մասին հակիրճ տեղեկատվություն ուղարկել:

7. Վերոնշյալ յուրաքանչյուր գործողություն արձանագրել եւ ուղարկել համագործակիցներին:

8. Հայկական կրթական ցանցի թղթավարությունում աշխատակազմի յուրքանչյուր անդամին հասանելի տեղում պահել արձանագրությունները առնվազը 3 տարի, այնուհետեւ արխիվացնել:

3. Հաղորդակցումը շահառուների հետ

Ովքեր են Հայակական կրթական ցանցի / ՀԿՑ շահառուները

- Այն մարդիկ են, խմբերը, հաստատությունները, որոնց կյանքը այս կամ այն կերպ բարելավվում է ԳՈՒՄ ՀԿ-ի իրականացրած գործունեությունից:

ՀԿՑ –ի ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԸ՝

2019թ.-ի դրությամբ

1. Քաղաքացիական Հասարակության Կազմակերպություններ/ՔՀԿ
2. Կրթական հաստատություններ /նախակրթարաններ, քոլեջներ, բուհեր, հանրակրթական հաստատություններ/,
3. Խոցելի խմբեր/ սոցիալապես անապահովներ, հաշմանդամություն ունեցողներ, կրթությունից դուրս մնացողներ- ԿԴԻԳ/
4. Երիտասարդներ /18-30/,

Գործողություններ

1. Կազմել հիմնական շահառուների տվյալների բազան՝ խմբավորելով ըստ՝
-տարածաշրջանների
-ոլորտների…

2. Ըստ խմբերի, յուրաքանչյուր կիսամյակի վերջում տեղերում կազմակերպել միջոցառումներ /հանդիպում, քննարկումներ…/

3. www.armedu.net ինտերնետ կայքում տեղադրել հաղորդակցման բաժնում, յուրաքանչյուր ամսվա վերջում պատասխանել տվյալ ժամանակահատվաում հավաքագրված հարցերին եւ տեղադրել:

4. Այն հարցերի շուրջ, որոնց ավելի ընդլայնված պատասխաններ են ենթադրվում, կազմակերպել խորհրդատվություն՝ նախապես համաձայնեցնելով հարցադրողի հետ:

5. Յուրաքանչյուր եռամսյակի վերջում հայտարարել բաց դռների օր՝ ՀԿՑ-ի շահառուների համար, դրան նախորդող 10 օրերի ընթացքում հավաքագրելով մասնակցության հայտեր /հայտի ձեւում անպայման կներառվի բովանդակությունը հստակեցնող կետ/: Ըստ հայտերի տեսակների բաց դռներին կմասնակցեն Հայկական կրթական ցանցի աշխատակազմի անդամները:

6. Շահառուների հետ իրականացված գործունեության մասին ամփոփ տեղեկատվություն մշակել եւ տեղադրել www.armedu.net ինտերնետային կայքում և ֆեյսբուքի էջում

7. Շահառուների մասին հաջողակ պատմություններ հավաքագրել եւ տեղադրել www.armedu.net կայքում: Վերջինս փոխարինում է արձանագրություններին:

4. Հաղորդակցումը աջակիցների հետ

Ովքեր են Հայկական կրթական ցանցի աջակիցները

Այն մարդիկ են, խմբերը, հաստատությունները, որոնցից Հայկական կրթական ցանցը ակնկալում է որեւէ աջակցություն, վերջիններս էլ պատրաստակամ են եւ նախկինում աջակցում են:

ՀԿՑ-ի ԱՋԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ՝
2019թ. դրությամբ

1. ՀՀ մարզերի մարզպետարաններ,
2. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,
4. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,
5. Քաղաքացիական հասարակության կառույցներ,
6. ՁԼՄ-ներ ,
7. ՏԻՄ-եր / համայնքապետարաններ

Գործողություններ

1. Կազմել աջակիցների տվյալների բազան՝ ներառելով

-հոբելյանական ամսաթվերը,
-կոնտակտ տվյալները,
-ղեկավարների ու ազդեցիկ անձանց նախասիրությունները եւ սովորությունները…

2. Ուսումնասիրել աջակիցների ռեսուրսները եւ կարիքները:

3. Խմբավորել այդ ռեսուրսները, որպեսզի անհրաժեշտության դեպքում արդյունավետ օգտագործվի:

4. Ըստ աջակիցների կարիքների եւ ՀԿՑ-ը ռեսուրսների պարբերաբար /եռամսյակը 1-ը/ փոխաջակցության ուղերձներ հղել:

5. Յուրաքանչյուր աջակցություն ստանալուց հետո շնորհակալական եւ հաշվետու նամակ ուղարկել /էլեկտրոնային կամ փոստային/:

6. ՀԿՑ-ի ղեկավարության գրասենյակում աջակիցների ընդունելության օրեր սահմանել: Դա կարող է լինել եռամսյակը մեկ պարբերականությամբ:

5. Հաղորդակցումը կառավարության, ԱԺ-ի եւ պետական այլ կառույցների հետ

Կառավարության եւ ԱԺ-ի ո՞ր օղակների հետ է ՀԿՑ -ին անհրաժեշտ հաղորդակցվել:

Այն օղակների, որոնց համակարգած ոլորտները համապատասխանում են ՀԿՑ-ի ծավալած գործունեության ոլորտներին:

ՀԿՑ-ի ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ՝ ԸՍՏ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԺ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ.
2019 թ. դրությամբ

1. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
2. ՀՀ կրթության և գիտության, մշակույթի սպորտի և նախարարություն
3. Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով
4. Առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողով

Գործողություններ

1. Վերոնշյալ օղակներին ենթարկվող համապատասխան գերատեսչությունների եւ անհատների տվյալների բազան ներառելով՝
-հոբելյանական ամսաթվերը,
-կոնտակտ տվյալները,
-ազդեցություն ունեցող մարդկանց տվյալները:

2. Պարբերաբար էլ-փոստով ուղարկել տեղեկատվություն ՀԿՑ-ի մասին:

3. Ուսումնասիրել ՀԿ-ների եւ Կրթական ոլորտներում իրականացվող ծրագրերին եւ նորություններին:

4. Առաջարկությունների փաթեթներ մշակել եւ ներկայացնել համապատասխան մարմիններին:

6. Հաղորդակցումը ՏԻՄ-ի հետ

ՏԻՄ-ի ո՞ր օղակների հետ է ՀԿՑ-ի անհրաժեշտ հաղորդակցվել:

Այն օղակների, որոնց համակարգած ոլորտները համապատասխանում են ԳՈՒՄ ՀԿ-ի ծավալած գործունեության ոլորտներին:

ՀԿՑ-ի հաղորդակից ՏԻՄ-ի բաժինները,
2019թ. դրությամբ

1. ՀՀ կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
2. Արդարադատության նախարարություն
3. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
4. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.

Գործողություններ

5. Վերոնշյալ օղակներին ենթարկվող համապատասխան գերատեսչությունների եւ անհատների տվյալների բազան ներառելով՝
-հոբելյանական ամսաթվերը,
-կոնտակտ տվյալները,
-ազդեցություն ունեցող մարդկանց տվյալները:

6. Պարբերաբար էլ-փոստով ուղարկել տեղեկատվություն ՀԿՑ-ի մասին:

7. Ուսումնասիրել ՀԿ-ների եւ Կրթական ոլորտներում իրականացվող ծրագրերին եւ նորություններին:

8. Առաջարկությունների փաթեթներ մշակել եւ ներկայացնել համապատասխան մարմիններին: